

Վահե Հովհաննիսյան

ԵՊՀ քաղաքացիական դատավարության
ամբիոնի դոցենտ, իրավ. գիտ. թեկն.

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ «ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔ ԱՍՏՐՈՒՄՆԻ ՀԱՅՈՑ»-ՈՒՄ

Դատական վերանայման ինստիտուտը, դրսևորման տարբեր ձևերով ամրագրվելով հայ մտածողների աշխատություններում, գործելով հայկական գաղութին վերապահված դատական ինքնավարության շրջանակներում, հայ իրավամշակույթի բաղկացուցիչներից էր, որը տրամաբանական զարգացում ունեցավ նաև Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացվելուց հետո: Ընդ որում, դատական վերանայմանը վերաբերող դրույթներն ուսումնասիրելիս հատկանշական են թե՛ ռուսահպատակ Արևելյան Հայաստանում, թե՛ թուրքահպատակ Արևմտյան Հայաստանում դատարանակազմության և իրականացվող քաղաքացիական դատավարության հիմնական առանձնահատկությունները, որոնք առավելապես պայմանավորված էին քաղաքական, սոցիալական, հոգևոր-մշակութային և մի շարք այլ գործոններով:

Մինչև Ռուսաստանին միանալը Արևելյան Հայաստանի քաղաքացիական դատավարությունը բնութագրող կարևորագույն համգամանք էր այն, որ այստեղ իշխող կարգի սահմանած ընդդատության համաձայն, քաղաքացիական գործերով դատական գործառույթ իրականացնում էին թե՛ մահմեդական դատարանները, սարդարը¹, խանությունների վարչական միավորների՝ մահալների կառավարիչ միրբուլուքները, և թե՛ հայ հոգևորականությունը, հայկական մահալների (շրջանների) մելիքները, գյուղական մելիքները և տանուտերերը: Դատարանն ապացույցները գնահատում և վճիռ էր կայացնում իր ներքին և ազատ հանոզմունքի հիման վրա, իսկ վճռից դժգոհ կողմը կարող էր այն բողոքարկել՝ գյուղական մելիքների և տանուտերերի դեմ՝ մահալի ղեկավար մելիքին, իսկ եկեղեցական դատա-

¹ Իրանի սահմանամերձ վիլայեթների, այդ թվում՝ Երևանի խանության ղեկավարներին կամ բիգլերբեգներին, որոնք մեծարվում էին «խան» տիտղոսով, 18-րդ դարի վերջից սկսեցին անվանել «Սարդար»՝ փոխարքա և գլխավոր զորահրամանատար: Վերջիններս Պարսից շահի կողմից նշանակված պաշտոնյա էր՝ օժտված ադատական և զինվորական լայն իրավունքներով:

րանի վճռի դեմ՝ կաթողիկոսարան: Դատարանը պարտավոր էր պահպանել օրինականությունը, որը կապվում էր նաև հնուց եկող սովորույթների, ավանդույթների, նախնիների ազնվության, ներողամտության հետ¹:

Հայոց պատմությունից հայտնի է, որ 18-րդ դարի վերջին Ցարական Ռուսաստանը ձեռնամուխ եղավ Անդրկովկասը Ռուսաստանին միացնելու գործընթացին, որն ավարտվեց 1828թ. Թուրքմենչայի պայմանագրի ստորագրմամբ: Ահերքելի է, որ Արևելյան Հայաստանի միացումը Ցարական Ռուսաստանին էական նշանակություն ունեցավ տնտեսական զարգացման և հայրենական իրավական համակարգի հետագա ձևավորման հնարավորության առաջացման համար: Ռուսական կայսրությունը թե՛ տնտեսապես, թե՛ իրավական առումով առավել զարգացած և առաջադիմական էր, քան Պարսկաստանը: Սակայն արդյունքում հայերի շրջանում իրականացվող քաղաքացիական դատավարությունում դատական վերանայման առումով նորից առաջացավ երկփեղկվածություն՝ մի կողմից թուրքապատակ Հայաստանը՝ Թուրքիային բնորոշ դատարանակազմական և քաղաքացիադատավարական վերանայման առանձնահատկություններով հանդերձ, մյուս կողմից՝ ռուսապատակ Արևելյան Հայաստանը՝ ռուսական դատական համակարգին բնորոշ դատական վերանայման առանձնահատկություններով: Սակայն հատկանշական է հատկապես այն հանգամանքը, որ այս ժամանակաշրջանում Ռուսաստանում ձևավորվել էին հայկական խոշոր գաղութներ, և քաղաքացիական գործերով արդարադատության իրականացումը, այդ թվում՝ դատական ակտերի վերանայումը պայմանավորված էին հայկական գաղութին վերապահված դատական ինքնավարությամբ:

Դատական վերանայման ինստիտուտն ամրագրված էր Ռուսաստանում հայկական ամենախոշոր գաղութներից մեկի՝ Աստրախանի գաղութում ստեղծված «Դատաստանագիրք Աստրախանի Հայոց»-ում, որով կարգավորվում էին թե՛ դատարանակազմական, թե՛ զուտ դատավարական բնույթի հարցեր, ամրագրված էին ներկայիս քաղաքացիական դատավարության կարևորագույն սկզբունքներ²: Դա-

¹ Տե՛ս Պետրոսյան Ռ.Գ., Դատարանը և քաղաքացիական դատավարությունը Արևելյան Հայաստանում XIX-XX դարերում, Եր., 2001, էջեր 35-42:

² Աստրախանի հայկական գաղութի արժանի ներկայացուցիչներ Եղիազար Գրիգորյանի, Գրիգոր Կանապյանի և Հովհաննեսի որդի Սարգսի հեղինակած «Դատաստանագիրք Աստրախանի Հայոցը» կայսրուհի Եկատերինա II-

տաստանագրքի դրույթներն արժևորվում են հատկապես իրենց կիրառական նշանակությամբ, քանի որ Եկատերինա II կայսրուհու հրամանով Ռուսաստանում ապրող հայերին շնորհվել էր դատական ինքնավարություն և 1763թ. Սոզոկ տեղափոխված հայերին թուլլատրվել է ունենալ դատարան, որն առաջնորդվել է Աստրախանի հայոց Դատաստանագրքով:

Դատաստանագիրքը հանգամանալից կարգավորում էր դատավորների, դատական պաշտոնյաների և դատարանական այլ աշխատակիցների պարտականությունները, դատարանի գործունեությունը, որի մեջ ներառված էին դատավարության մասնակիցների, հայցի, ապահովման, դատական ապացուցման և ապացույցների, դատական ակտերի և բազմաթիվ այլ իրավական ինստիտուտներին վերաբերող դրույթներ (Մաս երկրորդ, Գլուխներ՝ Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, Է, Ը, Թ, ԺԱ, ԺԴ):

Աստրախանի Զայոց Դատաստանագրքի II մասի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ դրանով սահմանվում էին դատական վերանայման երկու հիմնական ձևեր, որոնք ոչ միայն ապահովում էին դատական ակտերի բողոքարկման արդյունքում անօրինական և չհիմնավորված վճիռների վերացումը և սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությունը, այլև առանձին դեպքերում կարող էին նույնիսկ նախադեպային նշանակություն ունենալ: Դատաստանագրքի ԺԴ գլխի 7-րդ հոդվածի համաձայն. «Եթե որևէ հայցվոր կամ պատասխանող, դատավորի որոշումից անբավական լինելով, որոշումը ստանալուց հետո չորս օրվա ընթացքում զանգատական հայց է ներկայացնում, դատավորները պարտավոր են այն ստանալուց հետո, երկու շաբաթվա ընթացքում հրավիրել ինն անձանց, որպեսզի ծանոթանան նրա զանգատին: Եթե անցնի երկու շաբաթ և չհրավիրվեին Իննի խորհուրդ, դատավորները կլինեն հանցավոր և պետք է հատուցեն առանց թերացման, սակայն, եթե դատավորները հրավիրեն ինն անձանց, իսկ նրանք չգան, դատավորներն անմեղ կլինեն»: Զոդվածի շարադրանքից բխում է, որ այս պարագայում մենք գործ ունենք դասական վերաքննիչ բողոքարկման իրավունքի իրականացման հետ, իսկ իննի խորհուրդն էլ իրականացնում էր վերաքննիչ

ի՝ Ռուսական կայսրության հայերին ինքնավարություն տալու մասին հրամանից հետո դարձավ կիրառական նշանակություն ունեցող հայ իրավունքի կարևորագույն ակտ: Դատաստանագրքի ստեղծման աշխատանքներն սկսվել են 1747-1748 թթ., բայց այն իր վերջնական ավարտին է հասել 1765թ.:

ատյանի գործառույթները: Դատավորների գործունեությունը վերահսկելու համար ընտրվում էին օրենքներին և դատավարությանը տեղյակ ինը հոգի, որպեսզի երբ հարկ լինի, նրանք վերահսկեն և քննեն դատավորների գործունեությունը (Գլուխ Գ, հոդվ. 1): Դատաստանագրքի Գ գլխի հոդված 4-րդ ով սահմանվում էր. «Եթե իննի խորհուրդը քններ դատավորների գործունեությունը և տուժողների բողոքները ու ըստ նրանց պարզվի, որ դատավորների վճիռն անօրինական է և հակասում է դատական օրենսգրքերին, պետք է դատավորների վճիռը կասեցվի և իրենք՝ ինը հոգին, օրինական լուծում տան գործին»: Ընդ որում, Ինի խորհուրդը որոշումները կայացնում էր ձայների պարզ մեծամասնությամբ, և վերահսկողական վճիռը պետք է լիներ պատճառաբանված, գրավոր և բուլրի ստորագրությամբ հաստատված (Գլուխ Գ, հոդվ. 6-7):

Իննի խորհրդի անդամները պետք է մեծ զգուշությամբ և մանրամասնությամբ տեղեկանան դատավորների գործունեությանը, որպեսզի օրինական լուծում տան բողոքողների հարցերին, որովհետև, եթե իրենց որոշումն առանց օրինական քննության և ճիշտ իրազեկման տան, և դա հայտնի դառնա ու քննությամբ հաստատվի, նրանք պարտավոր են իրենց թյուր վերահսկողության համար, բողոքարկողին վճարել ոչ միայն նրա պահանջածը, այլև կրած վնասը (Գլուխ Գ, հոդվ. 10): *Իննի խորհուրդը գործն անբողջությամբ, լրիվ ծավալով կրկին անգամ քննող դատարան էր:*

Յարկ է նշել, որ Իննի խորհուրդը կարող էր իրականացնել ոչ միայն վերաքննության գործառույթ, այլև հենց առաջին ատյանի կարգով լուծել վեճը: Մասնավորապես, Բ գլխի 32-րդ և ԺԴ գլխի 2-րդ հոդվածները սահմանում էին. «Եթե դատական գործի ընթացքում դատավորների միջև տարաձայնություններ և հակառակ կարծիքներ ի հայտ գան¹, պարտավոր են յուրաքանչյուրը գրել իրենց կարծիքները և դիմել ինն անձանց, որոնք ընտրված են վերահսկելու դատավորներին և նրանց հայտնել իրենց տարաձայնությունների մասին, որպեսզի նրանք, հարցը քննելով, հաշտեցնեն նրանց տարաձայնությունները, և դատը պետք է համարվի ինն անձանց կողմից կատարված: ... Վերահսկող բարձրագույն ատյանի ինն անդամներին պետք է խնդրեն տեղեկանալ դատավորների տարաձայնությունները»:

¹ Առաջին ատյանի դատարանում գործերի քննությունն իրականացվում էր կոլեգիալ՝ երեք դատավորի կազմով, որոնցից մեկը նախագահում էր դատական միստը և «առաջին կամ գլխավոր» դատավորն էր:

րին և գրավոր արձանագրությամբ վճիռ կայացնել տարածայնություններ հարուցող հարցի վերաբերյալ, և ինչ էլ նրանք որոշեն, պետք է լինի հիմնավոր»: Փաստորեն, այս դեպքում ԻճՆԻ խորհուրդը որոշում էր կայացնում ոչ թե վերաքննիչ բողոքարկման հետևանքով գործի կրկնակի քննության արդյունքում, այլ դատավորների տարածայնությունների հետևանքով առաջին ատյանի դատարանի կողմից վճիռ չկայացնելու պայմաններում հիմնավորում էր վեճի լուծման ճիշտ տարբերակը և անմիջականորեն սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությանն ուղղված ակտ էր կայացնում:

Հարկ է նշել, որ Դատաստանագրքով դատարանի վճիռներին ոչ միայն օրինական, այլև հիմնավորված լինելու պահանջ էր ներկայացվում: Մասնավորապես, ԺԴ գլխի 1-ին հոդվածը սահմանում էր. «Դատավճիռ է կոչվում դատարանի որոշումն ու սահմանումը, որը գրվում է դատավորների գիտությամբ, հայցվորի խնդրագրի, պատասխանողի պատասխանի, հարցաքննվողի հանձնառության, վկաների ցուցմունքների և իրավական այլ ապացույցների հիման վրա¹»:

Աստիճանի Հայոց Դատաստանագիրքը տվյալ ժամանակաշրջանի համար արդյունավետ իրավական կառուցակարգեր էր պարունակում դատական վերանայման և բողոքարկման իրավունքների իրականացման համար, որոնք ուղղված էին օրինական և հիմնավորված դատական ակտերի կայացման ապահովմանը: Բավականին առաջադեմ դրույթ կարելի էր համարել Դատաստանագրքով դատական ակտերի բողոքարկման հիմքերի սահմանումը, որոնք հանգում էին նյութական և դատավարական իրավունքի նորմերը դատարանի կողմից խախտելուն: Մասնավորապես, սահմանվում էր, որ դատական ակտը պետք է լինի արդար, համապատասխանի օրենքներին և դատական օրենսգրքին, ինչպես նաև դատաստանագրքից ուղղա-

¹ Հարկ է նշել, որ Աստիճանի դատաստանագրքով ժամանակակից իրավաբանական գործերի քննության անմիջականության՝ դատավորի կողմից անձամբ գործի նյութերին ծանոթանալու և դատական միտում ապացույցները հետազոտելու սկզբունքը չէր գործում: Մասնավորապես, եթե որևէ դատավոր հիվանդության կամ հարգելի այլ պատճառով չէր գալիս դատարան, մյուս դատավորները չպետք է դադարեցնեին իրենց գործունեությունը, այլ պարտավոր էին իրենք կատարել դատական գործի քննությունը, իսկ եթե անհրաժեշտ լիներ բացակա դատավորի ստորագրությունը կամ նրա հավանությունն իրենց առաջարկությանը՝ պետք է նրա մոտ ուղարկեին ատենադպիրին և վերջինիս միջոցով կարգավորեին դատական հարցը կամ գործը (Բ գլուխ, հոդվ. 16):

կիրեն բխում էր, որ դատավորների վճիռը պետք է լինի հիմնավորված (Դատաստանագրքի I մասի ԻԳ գլխի 109-րդ, II մասի Գ գլխի 4-րդ, III մասի ԺԴ գլխի 1-ին հոդվածներ և այլն): Հետևաբար, նյութական և դատավարական օրենքներին չհամապատասխանելը միանշանակ կարելի է դիտել որպես նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ, որոնք միանշանակ դատական ակտը բողոքարկելու հիմքեր են: Գիշտ է, Դատաստանագրքով չէին սահմանվում նյութական և դատավարական իրավունքի նորմերի կոնկրետ խախտումները (չի կիրառվել այն օրենքը (նորմը), որը պետք է կիրառվեր, կիրառվել է այն օրենքը (նորմը), որը չպետք է կիրառվեր, սխալ է մեկնաբանվել օրենքը (նորմը), խախտվել է գործի քննության դատավարական կարգը), սակայն հստակ սահմանված էին դատավորների գործողությունների և դատարանի վճիռների իրավաչափության ընդհանուր պայմանները:

Բացի այդ, դատական ակտը բողոքարկող կողմը պարտավոր էր վերադաս աստիճանի ներկայացնել բողոքի փաստական և իրավական հիմնավորումները և դատարանի վճիռն հետ համաձայն չլինելու հանգամանքն ինքնին բողոքարկման հիմք չէր հանդիսանում: Մասնավորապես, Դատաստանագրքի Բ գլխի 33-րդ հոդվածում նշվում էր. «Եթե դատավորներն իրենց վճիռը կայացնեն, և հայցվորը կամ պատասխանողը բավարարված չլինի վճիռից և զանգատական հայց ներկայացնի՝ բացատրելով իր անբավարարվածության պատճառը, դատավորները պարտավոր են հրավիրել դատավորների գործունեությունը վերահսկելու համար ընտրված ինն անձանց, որպեսզի նրանք վերականգնեն արդարությունը»:

Դատական վերանայման հաջորդ ձևը Գերագույն դատարանի կողմից Իննի խորհրդի դատական վճիռների վերանայումն էր, որն իրականացվում էր ոչ միայն դատական գործունեության ոլորտում օրինականությունն ապահովելու համար, այլև հետապնդում էր օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու նպատակ և որոշակիորեն ուներ նախադեպային նշանակություն: Գերագույն դատարանը դատական համակարգի բուրգի վերին, բարձրագույն օղակն էր, որի գործունեությունը բավականին ընդհանրություններ ունի ժամանակակից վճռաբեկության հետ: Այսպես՝ Գերագույն դատարանը վերահսկողություն էր իրականացնում ոչ միայն դատական համակարգի գործունեության օրինականության նկատմամբ, այլև քննելով Իննի խորհրդի վճիռների դեմ բերված բողոքները, որոշում էր կայաց-

նուն գործի լուծման արդարացիության վերաբերյալ և անհրաժեշտության դեպքում սանկցիաներ էր կիրառում գործը լուծող դատավորների նկատմամբ: Մասնավորապես, Դատաստանագրքի Գ գլխի 12-րդ հոդվածը սահմանում էր. «Եթե վերահսկող ատյանի քննությանը տված լուծումը համապատասխանի դատավորների վճռին, բայց Գերագույն դատարանի քննությանը պարզվի, որ դատավորների և վերահսկողների կողմից վերահաստատված վճիռն օրինական չէ, բողոքարկողի պահանջը՝ վնասով հանդերձ հավասար չափով պետք է վճարեն վերահսկող անձինք, քանի հոգի որ լինեն, իսկ դատավորները Գերագույն դատարանի որոշմամբ արքունական գանձարան պետք է այնքան տուգանք մուծեն, որքան անհրաժեշտ լինի: Իսկ եթե վերահսկող անձանց տված լուծումը դատավորների որոշմանը չհամապատասխանի, դատավորներն ազատվում են տուգանքից, քանզի նրանք իննի քննության ժամանակ արդեն տուգանվել են և պարտավոր չեն երկրորդ անգամ տուգանվել: Միայն վերահսկող անձինք պետք է լրիվ վճարեն բողոքողին՝ նրա կրած վնասով հանդերձ»: Ընդ որում, Դատաստանագիրքը պատասխանատվություն էր սահմանում Գերագույն դատարան վերահսկող ատյանի վճռի դեմ անհիմն բողոք բերելու համար և նշում էր. «...զուր բողոքողը պետք է վերահսկող ատյանի յուրաքնչյուր անդամին հարյուր ռուբլի տա՝ արժանապատվությունը վիրավորելու համար և արքունական գանձարան մուծի զուր բողոքարկվածի արժեքի տասը տոկոսը»: Հարկ է նշել, որ Գերագույն դատարանում գործերի քննությունն իրականացվում էր ընդհանուր կանոններով և վերահսկող ատյանում գործերի քննության դատավարական կարգը նույնանում էր բոլոր ատյաններում:

Ինչ վերաբերում է Գերագույն դատարանի և վերահսկող ատյանի գործունեության նախադեպային նշանակությանը, ապա այն չէր սահմանափակվում զուտ օրենքների մեկնաբանություններով՝ ուղղված իրավանորմների միատեսակ կիրառությանը, այլև առանձին դեպքերում կարող էին վարքագծի կանոններ սահմանվել: Բացի այդ, հատկապես կարևորվում էր հայկական համայնքի օրենքների և առավել բարձր իրավաբանական ուժով օժտված իրավական ակտերին համապատասխանության հարցը որոշելու հանգամանքը: Այսպես՝ Դատաստանագրքի I մասի 109-րդ հոդվածի համաձայն. «...մարդկային միտքն անսահման է, մտածելուց առաջ գալիս են հանդուներ և դրանցից առաջ երկիմաստ գործեր, բազմիցս կարող են

պատահել այնպիսի դեպքեր, որոնց մասին դատաստանագրքում չկան համապատասխան դատողություններ և լուծումներ: Այդպիսի դեպքերի համար դատավորները պետք է հրավիրեն ինն անձ, ովքեր կոչված են վերահսկելու դատավորների գործունեությունը, որպեսզի միատեղ քննեն և լուծում տան հարցին, և տասներկու անձը համատեղ ինչպիսի վճիռ կայացնեն, այն պետք է գրել օրագրում, որպեսզի, եթե նման այլ դեպք պատահի, առաջնորդվեն նույն որոշումով: Եթե ինն անձինք երեք դատավորների հետ չեն կարողանում հարցին լուծում գտնել, անհրաժեշտ է գործի բոլոր մանրամասները հաղորդել բարձրագույն դատարան, և ինչ վճիռ կայացվի բարձրագույն դատարանի կողմից՝ իրագործվի առանց թերացման: Քանի որ մեր ազգը պետություն և իշխանություն չունի և ամենայն հայոց ազգը ենթակա է օտարազգի իշխանությունների, հնարավոր է դարձյալ հասարակության խաղաղության և ճիշտ կառավարման համար թագավորների կողմից լինեն այնպիսի հրամաններ, որ հակասեն այս Դատաստանագրքի հոդվածներին: Այդպիսի դեպքերում հոդվածը պետք է գործի՝ բաց թողնելով միայն այն մասը, որը հակասում է թագավորական հրամանին, քանզի քաղաքացիական օրենքներն աստվածային օրենքների նման անփոփոխ չեն, որ բոլոր ժամանակներում հաստատուն լինեն, այլ ըստ ժամանակի և կացության, հանուն բարության և ճիշտ դատողության միշտ պետք է փոփոխվեն դեպի բարին և լավագույնը: ...Այդ իսկ պատճառով, երբ ժամանակի ընթացքում օրինավոր պատճառներով հարկ է լինում ինչ որ բան փոխել՝ պետք է փոփոխելու պատճառները և հասարակության համար այդ փոփոխությունից սպասվելիք շահը հայտնել բարձրագույն դատարան, և միայն նրա թույլտվությամբ և հրամանով կատարել փոփոխությունը»:

Ամփոփելով Աստրախանի Հայոց Դատաստանագրքով սահմանված դատական վերանայման առանձնահատկությունները, կարող ենք ասել, որ՝

- *նախատեսված էր եռաստիճան դատական համակարգ, որի վերևում կանգնած էր Գերագույն դատարանը,*
- *վերահսկող ատյանի (Իննի խորհուրդ) և բարձրագույն դատական ատյանի (Գերագույն դատարանի) կողմից իրականացվող դատական վերանայումը լրիվ համապատասխանում էր վերաքննությանը,*
- *վերահսկող և բարձրագույն ատյաններում գործերի քննությունը հանդիսանում էին քաղաքացիական դատավարության ինքնու-*

րույն փուլեր,

- բողոքարկման արդյունքում գործը տեղափոխվում էր վերադաս դատական ատյան՝ ըստ էության նոր քննության,
- վերահսկող ատյանը վերանայում էր առաջին ատյանի դատարանի վճիռները,
- առանձին դեպքերում վերահսկող ատյանը կարող էր վեճը լուծել առաջին ատյանի դատարանի կարգով (հոդվ. 32),
- բողոքարկվել կարող էին ինչպես գործն ըստ էության լուծող, այնպես էլ միջանկյալ դատական ակտերը՝ դատավորների գործողությունները (ԻԳ գլուխ, հոդվ. 2),
- բողոքարկման արդյունքում դատական ակտն օրինական ուժի մեջ չէր մտնում (բացառությամբ միջանկյալ դատական ակտերի),
- սահմանված էր բողոքարկման ժամկետ (4 օր),
- դատական ակտը կարող էին բողոքարկել կողմերը,
- բողոքարկումը պայմանավորված էր կայացված վճիռի հետ բողոք բերող անձի անհամաձայնությամբ, սակայն վերջինս պետք է հիմնավորեր բողոքում արտահայտած պահանջը,
- սահմանված էին դատարանի վճռին ներկայացվող օրինական և հիմնավորված լինելու պահանջները, որոնց խախտումը համապատասխանաբար հենց բողոքարկման հիմք էր,
- վերադաս դատական ատյանը, կրկին քննելով գործը, ստուգում էր ինչպես փաստական, այնպես էլ իրավական կողմերը,
- գործի քննության արդյունքներով վերադաս ատյանն իրավունք չուներ գործն ուղարկել նոր քննության առաջին ատյանի դատարան, այլ կայացնում էր վճիռ, որով հաստատվում էր ստորադաս ատյանի ակտի օրինականությունը կամ նոր լուծում էր տրվում գործին, նորովի էին կարգավորվում վիճելի նյութական իրավահարաբերությունները,
- վերադաս ատյանում գործի քննությունն իրականացվում էր ընդհանուր կանոններով և նոր ապացույցներ ներկայացնելու արգելքի մասին հատուկ նշում չկար,
- Գերագույն դատարանը վերանայում էր վերահսկող ատյանի դատական որոշումները,
- վերահսկող և բարձրագույն ատյանների գործունեությունն ուներ նախադեպային նշանակություն,
- Գերագույն դատարանը եզրակացություն էր տալիս նաև հայ

համայնքի օրենսդրական փոփոխությունների նախագծերի վերաբերյալ,

• *դատարան դիմելու համար գանձվում էր տուրք՝ դատարանական մաքս՝ պահանջի 10 տոկոսի չափով:*

Աստրախանի Հայոց Դատաստանագիրքը կիրառական կարևոր նշանակություն ունեցող օրենսդրական ժողովածու էր, որը թեև որոշակի իրավական անկատարություններ ուներ (օրինակ՝ քրեական և քաղաքացիական գործերով կայացվող ակտերը չտարբերակելը և այլն), սակայն բավարար էր՝ հայկական համայնքին ընձեռված դատական ինքնավարության շրջանակներում արդարադատություն իրականացնելու համար: Ըստ Հայաստանում պահպանված արխիվային տվյալների՝ 1747-1840 թթ. Աստրախանի հայկական ատյանի կողմից քննվել է 178 քաղաքացիական գործ¹, իսկ 1825-1910թթ. Աստրախանի հայկական դատարանի կողմից՝ ավելի քան 260 քաղաքացիական գործ²:

¹ ՀՀԿԿԱ, ֆ.387, ց.1, հհ. 40-56:

² ՀՀԿԿԱ, ֆ.383, ց.1, հհ. 63-78:

Vahe Hovhannisyan

*Candidate of Legal Sciences, Docent,
YSU Chair of Civil Procedure*

**THE INSTITUTE OF APPEAL OF THE JUDICIAL ACTS IN CIVIL
CASES ACCORDING TO THE CODE OF LAWS OF THE
ARMENIANS OF ASTRAKHAN**

The current article is dedicated to the exploration of judicial review procedures determined by the Code of Laws of the Armenians of Astrakhan, which was created in one of the biggest Armenian colonies in Russia-in Astrakhan. The article addresses both structural and procedural aspects of the judicial review. Based on the analysis of various provisions of the Code of Laws the author describes the peculiarities of judicial review meanwhile underlining the drawbacks of legal regulations on the matter. Moreover, the author concludes that there was a full judicial review (the higher court instance was reviewing the case based both on factual and legal merits, and it wasn't vested in to return the case to the first instance court, besides, the court was issuing the judgment proving the legality of the judicial act of lower instance court or prescribing new solution to the case, to the disputed substantive relations, and additionally the review was carried out based on the general procedural rules with no exception to provide additional evidences), and the judgments of the higher courts had a significance of judicial precedent to some extent.

Code of Laws of the Armenians of Astrakhan was a completion of laws having prominent practical importance. Notwithstanding some legal weakness of it (e.g. absence of differentiation of civil and criminal judicial acts) that was a sufficient one to administrate justice within the judicial autonomy (discretion) provided to Armenian colony.